ՀԱՅԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 30-ԱՄՅԱԿԸ. ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՍԱՆԵԼԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ԷՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանալի բառեր – տնտեսական, ռազմավարական, համագործակցություն, դիրքորոշում, շահագրգռված, պատերազմ, իրողություն, հարաբերություններ, զարգացում

Միջազգային հարաբերությունների ձևավորվող բազմաբևեռ համակարգում Ռուսաստանը խաղում է առաջատար և հաճախ որոշիչ դերերից մեկը: Սա նոր հեռանկարներ է բացում ռուս-հայկական ռազմավարական-դաշնակցային հարաբերությունների ամրապնդման և հետագա զարգացման համար: Այդ հարաբերությունների հուսալի հիմքը եղել և շարունակում է մնալ Ռուսաստանի և Հաաստանի միջև ստորագրված՝ 1997թ. օգոստոսի 29-ի Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին պայմանագիրը:

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին: Այս հիշարժան տարեթիվը մեր երկրները նշում են երկկողմ հարաբերությունների բարձր մակարդակի պայմաններում, լի վճռականությամբ՝ դրան էլ ավելի ամրապնդելու, խորացնելու զարգացման միտումները:

Ռուսաստանի հետ առաջին հերթին տնտեսական հարաբերություններն են իրական հնարավորություններ ընձեռում լուծելու խախտված առևտրային հաշվեկշիռը, տնտեսության կառուցվածքային անհավասարակշռությունը և մի շարք այլ խնդիրներ, ինչին ուղղակիորեն նպաստում են ավելի էժան էներգառեսուրսներն ու Հայաստանի արտադրանքի նկատմամբ իրական պահանջարկը: Էներգակիրների, ինչպես նաև Հայաստանի ռազմավարական նշանակության արտադրանքի գների առու-

մով ընտրության առավել լայն հնարավորություններ ընձեռում է առաջին հերթին ԵԱՏՄ-ի առաջատարը՝ Ռուսաստանի Դաշնությունը: Կանխատեսվում է, որ 2024 թվականին արտահանումը Ռուսաստան կգերազանցի 1 մլրդ դոլլարը, իսկ ներմուծումը կկազմի շուրջ 2 մլրդ դոլլար: Այսպիսի հեռանկարները կանխատեսվում են՝ ելնելով այն դրույթներից, ինչպիսիք են այն իրողությունները, որ օրինակ, Հայաստանից Ռուսաստան արտահանումը 2015-2021թթ. աճել է 2,8 անգամ: Դա ցույց է տալիս, որ ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատանքային ռեսուրսների ազատ տեղաշարժը, մաքսատուրքերի վերացումը ԵԱՏՄ-ում շատ ավելի մեծ դեր են խաղում, քան ընդհանուր սահմանների բացակայությունը: : Մեզ անհրաժեշտ է ունենալ Ռուսաստանի հետ շուկայական և դաշնակցային հարաբերությունների օպտիմալ համադրություն, քանի որ չափազանց մեծ կարևորություն ունեն ներդրումների համար էներգետիկ ռեսուրսների ողջամիտ գները:

Հայաստանի առանցքային նպատակը ապրանքների ու ծառայությունների արտահանման՝ ՀՆԱ-ի նկատմամբ 50 % հարաբերակցության հասնելն է, որտեղ պետք է գերակայի պատրաստի արտադրանքը: Հակառակ դեպքում փոքր տնտեսություն ունեցող երկրում էական զարգացում լինել չի կարող, քանի որ փոքր տնտեսությամբ երկրի համար ներքին շուկան շատ սահմանափակ է: Հայաստանի պատրաստի արտադրանքի արտահանման աճի մեջ հիմնական դերը խաղում է ռուսական շուկան: Գոյություն ունեն դեպի Ռուսաստան արտահանման զգալի աճի գրավականներ: ԵԱՏՄ անդամ երկրների քաղաքացիները ազատ տեղաշարժի հնարավորություն ունեն: Ռուսաստանի քաղաքացիները հնարավորություն ունեն ներպետական անձնագրերով Հայաստան այցելել: Վերջին երեք տարիներին Հայաստանի տնտեսությունում կատարված ուղղակի ներդրումների 51 %-ը բաժին է ընկնում Ռուսաստանին[1]:

Ինչ վերաբերում է երկու երկրների միջև ռազմական համագործակցությանը և դրանց առանցքային ոլորտներին, ապա միանշանակ պետք է

[1] "World Economic Outlook Database, April 2021". World Economic Outlook. International Monetary Fund. April 2021.5 Retrieved 7 April 2021. URL: https://www.imf.org/en/Publications /WEO /weo-database/2021/April

նշել, որ Ռուսաստանի և Հայաստանի միջև համագործակցության կարևոր ուղղություն են բազմակողմ ձևաչափերը՝ ՀԱՊԿ-ի օրինակով: Բավական է նշել երկրների միջև մի քանի պայմանագրերի և համաձայնագրերի կետեր, որոնք կհիմնավորեն նրանց միջև ռազմադիվանագիտական ոլորտում առկա ջերմ հարաբերությունների խորացմանն ուղղված նկրտումները.

- «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» պայմանագիր (1997թ. Օգոստոսի 29)

- Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև XXI դար ուղղված դաշնակցային փոխգործակցության մասին հռչակագիր (2000թ. սեպտեմբերի 26)

- «Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագիր (1995թ. մարտի 16)

- «Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին» համաձայնագիր (2015թ. դեկտեմբերի 23)[1]:

Ռուսաստանը գնահատում է Հայաստանը որպես հուսալի գործընկեր և դաշնակից հարավային Կովկասում, իսկ Հայաստանը Ռուսաստանը դիտում է որպես անվտանգության երաշխավոր: Երկու երկրների դիրքորոշումները համընկնում են կամ մոտ են առանցքային միջազգային հարցերի գերակշիռ մասի դեպքում, իսկ Հայաստանի համագործակցությունը ՀԱՊԿ-ի ձևաչափով երկրի ազգային անվտանգության էական տարրն է: Ի սկզբանե ՀԱՊԿ-ը դիտվում էր ԱՊՀ-ի ռազմաքաղաքական ինտեգրման բաղկացուցիչ մաս: 2011թ. հոկտեմբերին ԱՊՀ մասնակից պետությունները, այդ թվում՝ Ռուսաստանը և Հայաստանը, ստորագրեցին համաձայնագիր ազատ առևտրի գոտու ստեղծման մասին, որով տվյալ միջազգային կազմակերպության ինտեգրացիոն գործընթացների փուլը ևս մեկ մակարդակով բարձրացավ:

---

[1] «Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև - Հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին», https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=115436

2015թ. մայիսի 19-ին ՌԴ-ի և ՀՀ-ի կառավարությունների միջև ստորագրված համաձայնագրով ստեղծվեց Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնը, որը նպատակաուղղված է եղել ՀԱՊԿ-ի պատասխանատվության տակ գտնվող տարածքների, տվյալ դեպքում՝ ՀՀ-ի բնակչության անվտանգության ապահովման բարձրացմանը[1]:

Ռուս և հայ ժողովուրդների մշակութային-հոգևոր մտերմությունը կարևոր հիմք է ստեղծում երկու երկրների դաշնակցային հարաբերությունների համար, իսկ անվտանգության ոլորտում համընկնող շահերը փոխշահավետ համագործակցության հնարավորություն են տալիս:

ՀՀ-ի և ՌԴ-ի համագործակցության ամրապնդումը դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո սկսվեց հայոց պատմության այնպիսի դժվար էջից, ինչպիսին էր 1988-1994թթ. առաջին Ղարաբաղյան պատերազմը, որի ընթացքում հայ-ռուսական հարաբերությունները լուրջ փորձությունների ենթարկվեցին: Մյուս կողմից 1991 թվականին ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով տեղի ունեցած աշխարհաքաղաքական փոփոխությունները հանգեցրին ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի կողմից իր ռազմական դոկտրինը վերանայելուն և այն նախկին ԽՍՀՄ-ի հարավային շրջաններում և Բալկաններում նեոթուրանական նպատակներին հարմարեցնելուն: Թուրքիան սկզբնական շրջանում չեզոք դիրք է բռնել, սակայն 1992-ից սկսեց ուղղակի աջակցություն տրամադրել Ադրբեջանին ռազմական տեխնիկայի և մասնագետների տեսքով, նույնիսկ ԱՄՆ արտադրությանը պատկանող զենքերով, որոնք Ղարաբաղյան պատերազմի ժամանակ հայկական զինված ուժերի հարձակումների արդյունքում առգրավվեցին մեր կողմից, ինչը սկանդալային իրադրություն ստեղծեց, որի հետևանքով Ադրբեջանը որոշակի պատժամիջոցների տակ ընկավ: ՌԴ-ն այդ ընթացքում ջանքեր էր գործադրում Թուրքիայի միջամտությունը կանխելու և վերջինիս՝ տարածաշրջան մուտքը կանխարգելե-

[1] Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի կայք, https://www.rachr.ru /am/about/

լու նպատակով: Մոսկվայի նախազգուշացումը ղարաբաղյան առճակատման գոտում Թուրքիայի կողմից հնարավոր ռազմական գործողության վերաբերյալ բխում էր Ռուսաստանի ղեկավարության ցանկությունից՝ կանխելու Հարավային Կովկասում ուժերի հավասարակշռության կտրուկ փոփոխությունը և Ռուսաստանի ազգային անվտանգությանն սպառնացող նոր վտանգները[1]:

Ինչպես նշում է ՌԴ ԱԳՆ ՄՊՄՀԻ-ի Միջազգային հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող Նիկոլայ Սիլանը, «Ժողովուրդների դաշինքին հղում անելը երբեմն ծառայում է որպես միջոց, որն օգտագործվում է քաղաքական գործիչների կողմից՝ ընդունված որոշումներից բխող պատասխանատվությունը նվազեցնելու համար, կարծես այն հաշվարկով, որ ինչ էլ լինի, «ժողովուրդների միջև կապերը» ինչ-որ կերպ կաշխատեն և կփրկեն»[2]: Ռուսաստանը ելնում է նրանից, որ տարածաշրջանում պատերազմ այլևս չպիտի լինի: Ռուսաստանյան շուկան հսկայական դեր է խաղում Հայաստանի տնտեսական աճի գործում: Ներկրման փոխատեղման ռուսական ծրագրերը, որ մոտակա տարիներին շատ արդիական կլինեն, կարող են ընդգրկվել նաև Եվրասիական տնտեսական միության երկրները, ներառյալ Հայաստանը: Ռուսաստանը ուղղակիորեն շահագրգռված է, որ Հայաստանը չկորցնի իր բնակչությունը և ամրապնդի իր պետական ինստիտուտները: Երկու երկրների դաշինքը կարող է ծառայել այդ խնդրին:

ՀՀ-ի և ՌԴ-ի տնտեսական համագործակցության առավել ամուր հիմքեր դրվեցին 2001թ. սեպտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև մինչև 2010թ. երկարաժամկետ տնտեսական համագործակցության մասին» պայմանագրով ու «Հայաստանի ու Ռուսաստանի միջև մինչև 2010թ. երկարաժամկետ տնտեսական համագործակցության» ծրագրով: 2013թ. Հայաստանի և Ռուսաստանի միջև մինչև 2020 թվականը երկարաժամկետ տնտեսական համագործակցության ծրագրի իրականացման շրջանակներում ստորագրվեց 2014-

---

[1] «Интернационализация конфликта» //“Независимая газета”, 23 мая 1992, № 97 (268), էջ 1-3:

[2] Հայաստան-Ռուսաստան. բարեկամություն, համագործակցություն և փոխադարձ օգնություն, էջ 33-34:

2017թթ. միջոցառումների ծրագիրը։ Հետևյալ գործընթացների արդյունքում ներկայումս Հայաստանում գործում է ավելի քան 1400 ձեռնարկություն հայ-ռուսական համատեղ կամ միայն ռուսական կապիտալով, իսկ Հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի կայուն աշխատանքը վերջին ժամանակներում տնտեսական համագործակցության ուղղությամբ երկու երկրների առևտրատնտեսական կապերի հագեցվածության ցուցանիշ է դարձել։ Հայաստանը պետք է օգտագործի բոլոր հնարավորությունները՝ հիմնելու ռուս-հայկական ձեռնարկություններ։ Դրան կնպաստեն հանքային ապրանքների գների հավասարեցումը, Իրանի հետ ազատ առևտրի համաձայնագիրը։ Հայաստանի և Ռուսաստանի գործարար հանրությունը կարող է աշխարհին ներկայացնել մրցունակ գիտական միտք և գիտահենք արտադրանք։

Միջազգային հանրային իրավունքի տեսանկյունից տարբեր միջազգային հարթակներում, մասնավորապես՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում Հայաստանը աջակցում է Ռուսաստանի Դաշնությանը։ Օրինակ՝ 2014 թվականի մարտի 27-ին վերը նշված հարթակում Ղրիմում անցկացված հանրաքվեն չճանաչելու վերաբերյալ քվեարկության ժամանակ Հայաստանը դեմ քվեարկեց հանրաքվեն չճանաչելուն։ Դրանով Հայաստանը աջակցեց Ռուսաստանին։ Այնուհետև ևս 9 բանաձևեր ընդունվեցին հանրաքվեի չճանաչման վերաբերյալ, որոնցից բոլորին Հայաստանը նույնպես դեմ քվեարկեց։

Ռուսաստանում հայ համայնքը տարբեր գնահատականներով կազմում է ավելի քան 2 մլն մարդ, ինչը գրեթե համադրելի է Հայաստանի բնակչության թվին։ Երբ բանախոսություններ են տեղի ունենում հայրենիք-սփյուռք հարաբերությունների մասին, Ռուսաստանում ապրող հայերի մասին խոսելիս ընդունված է հայտարարել, որ Ռուսաստանում ապրող հայ համայնքը ի տարբերություն այլ երկրներում ապրող հայ համայնքների անվանվում է «ներքին սփյուռք»։ Շատ հայեր այժմ Ռուսաստանը համարում են իրենց երկրորդ հայրենիքը, ռուսերեն լեզուն չեն ընդունում որպես օտար լեզու, այնտեղ հայերի նկատմամբ խտրական վերաբերմունք չի ցուցաբերվում։ Հայ-ռուսական հարաբերությունների սերտացումը և վատթարացումը անմիջականորեն և ուղղակիորնե ազդում է

նաև Ռուսաստանում բնակվող հայերի վրա։ Ի վերջո չմոռանանք, թե ինչ տեղի ունեցավ Ռուսաստանում ապրող վրացիների հետ 2008 թվականի ռուս-վրացական օգոստոսյան պատերազմից հետո. ռուսական իշխանությունը միջոցներ ձեռնարկեց, որպեսզի իր տարածքում ապրող վրացիները զանգվածաբար լքեն Ռուսաստանը։ Չնայած երբեմն տեղի ունեցող հայ-ռուսական հարաբերությունների սրացում տեղի է ունենում, Հայաստանում և այլ երկրներում բնակվող ազգությամբ որոշ հայեր հայտարարում են, որ Հայաստանը պետք է խզի իր բոլոր տեսակի հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ, պետք է դուրս գա այն բոլոր կազմակերպություններից, որտեղ Ռուսաստանը մեծ ազդեցություն ունի, որպեսզի հնարավոր բոլոր կապի միջոցները վերանան։ Բարեբախտաբար հայկական իշխանությունները նորագույն պատմության ընթացքում Ռուսաստանի հետ հարաբերությունները խզելու որևէ էական քայլ չեն ձեռնարկել, քանի որ երկու երկրները թե պատմական, թե քաղաքական տեսանկյունից կապված են իրար բազմաթիվ թելերով։ Այդ դեպքում նաև հարց է առաջանում. եթե Հայաստանը դուրս է գալիս այնպիսի կազմակերպություններից, որտեղ Ռուսաստանը ունի մեծ ազդեցություն, ապա դեպի ուր է գնալու, դեպի որ կազմակերպությունները։ Հատկանշական է բերել համապատասխան օրինակը. երբ օազիս փնտրող բնակիչները մինչև վստահ չեն լինում, որ մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող այլ օազիսում ջուր չկա, դուրս չեն գալիս իրենց օազիսից և անապատով չեն գնում դեպի մյուսը։

Ընդհակառակը, վերջին շրջանում հայ-ռուսական հարաբերությունները նոր մակարդակի են հասնում։ Եթե նախկինում երկու երկրների միջև հարաբերությունները զարգանում էին որոշակի օրինաչափությամբ, ապա վերջին 2 տարիների ընթացքում դրանք դարձել են աննախադեպ. սկսած 2021-ի հոկտեմբերին Երևանում անցկացված 8-րդ տնտեսական ֆորումից և վերջացրած վերջերս Վլադիվոստոկում տեղի ունեցած Արևելյան տնտեսական յոթերորդ ֆորումով, որի ժամանակ հայ-ռուսական ան-

նախադեպ սերտացման մասին խոսեցին Հայաստանի և Ռուսաստանի ղեկավարները[1]։

Երկրների միջև գնալով սերտացող հարաբերությունների և դրանց տեսանելի հեռանկարների մասին առավել հստակ պատկերացում կազմելու համար ստորև կնշվեն մի քանի փաստեր, որոնք բազմիցս քննարկումների տեղիք են տվել և հիմա էլ են քննարկվում հայկական և ռուսական լրատվամիջոցներում (և ոչ միայն).

- պղնձաձուլարանի կառուցում. Հայաստանի վարչապետի հետ հանդիպման ժամանակ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի 60%-ի բաժնետեր «Գեոպրոմայնինգ» ընկերության ղեկավար Ռ. Տրոցենկոն հայտարարել է, որ նպատակ ունի առաջիկա տարիներին Հայաստանում սկսել նոր պղնձաձուլարանի կառուցումը, ինչի շնորհիվ հնարավորություն կընձեռվի վերամշակել արտադրանքը, կառուցել նոր արտադրամասեր, որպեսզի Հայաստանն արտադրի պղինձ, այլ ոչ թե խտանյութ։ Նշենք, որ խտանյութը արտահանելիս արտաքին շուկայում այն վաճառվում է մի քանի անգամ ավելի էժան գնով, քան երբ պղնձաձուլարանում վերամշակվելուց հետո է արտահանվում[2]։

- նոր աէկ-ի ստեղծում։ Հայաստանի կողմից արվել է առաջարկ նոր ատոմային էլեկտրակայանի ստեղծման վերաբերյալ։ Այն պղնձաձուլարանի կառուցման ընդհանուր ծրագրի մի մասն է կազմում։ Ատոմակայանը լիարժեք մասնավոր չի լինելու ըստ պայմանավորվածության, դրանում պետք է ակտիվ մասնակցություն ունենա նաև ՀՀ կառավարությունը։ Համաձայնության արդյունքում նախատեսվել է, որ ատոմային էլե-

---

[1] «Մենք ունենք լավ նորություններ». Նիկոլ Փաշինյանի ելույթն Արևելյան տնտեսական ֆորումի ժամանակ, https://www.youtube.com/watch?v=gtUAQkLIbyg.

[2] Մինչև 2025 թվականը նախատեսվում է սկսել նոր պղնձաձուլարանի շինարարությունը, https://www.1lurer.am/hy/2021/10/06/%D5%84%D5%AB%D5%B6%D5%B9%D6%87-2025-%D5%A9%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A5%D5%BD%D5%BE%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A7-%D5%B6%D5%B8%D6%80-%D5%BA%D5%B2%D5%B6%D5%B1%D5%A1%D5%B1%D5%B8%D6%82%D5%AC%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B7%D5%AB%D5%B6%D5 %A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%BD%D5%AF%D5%BD%D5%A5%D5%AC-%D5%93%D5%A 1%D5%B7%D5%AB%D5%B6%D5%B5%D5%A1%D5%B6/571388 .

կետրակայանը պետք է արդիկանացված և արդեն իսկ գործարկված լինի 2025 թվականի հունիսի դրությամբ[1]:

- 1 մլրդ դոլլարի ներդրում. դեռևս 2021 թվականի հոկտեմբեր ամսին Ռուսաստանի Դաշնության տնտեսական զարգացման փոխնախարար Դմիտրի Վոլվաչի խոսքով Ռուսաստանը նախատեսում է մոտ ապագայում 1 մլրդ դոլլարի ներդրում կատարել Հայաստանի տնտեսության մեջ և որպես հիմք է հանդիսացել հայ-ռուսական առևտրաշրջանառության ծավալների վերականգնումը նախապատերազմյան դրության: Չնայած 2022 թվականի փետրվարից Ռուսաստանը գտնվում է պատերազմի մեջ, և նախատեսված ներդրումները որոշակիորեն հետաձգվում են, այնուամենայնիվ, ՌԴ-ն չի հրաժարվել իր ծրագրերից և ռազմական գործողությունների ավարտից հետո անշուշտ նախաձեռնությունները կիրագործվեն[2]:

- Մետրոպոլիտենի համար նոր ռելսերի ձեռքբերում. ուսումնասիրելով դրսի շուկան (քանի որ ՀՀ տարածքում ռելսեր չեն արտադրվում)՝ պարզվել է, որ մետրոպոլիտենի մետրոների համար նախատեսված այս տեսակի ռելսերի արժեքը ոչ պակաս է 37.000 դրամից 1 մետրի համար, միաժամանակ, այնինչ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից առաջարկվել է p-50 տեսակի 4300 մ խմբաքանակի ռելսերի մատակարարման անհամեմատ ցածր գին՝ 141 միլիոն դրամ: Բացի այդ, ընկերությունն առաջարկել է մատակարարումն իրականացնել անհամեմատ սեղմ ժամկետներում՝ մինչև 45 օրվա ընթացքում[3]:

Հայաստանում ընթանում է սուր բանավեճ Ռուսաստանի հետ ռազմավարական հարաբերությունները զարգացնելու կողմնակիցների և հակառակորդների միջև: Այս աշխույժ և երբեմն սուր բանավեճը առայժմ չի խանգարում, որպեսզի Հայաստանի Հանրապետությունը կառուցողական և ակտիվ մասնակցություն ունենա այն տնտեսական, քաղաքական և այլ

---

[1] «Գեոպրոմայնինգը» պղնձաձուլարանի ու նոր ԱԷԿ կառուցելու առաջարկ է արել, https://www.youtube.com/watch?v=GnO2q_5czVM

2 Ռուսաստանը չի նախատեսում կրճատել ներդրումները Հայաստանում և ակնկալում է ավելի քան $1 միլիարդ ներդնել նախագծերում, https://tass.ru/ ekonomika/12699049

[3] Երևանի մետրոյի ռելսերը մաշված են, անհապաղ փոխարինման ենթակա. Կառավարությունը 141 մլն դրամ հատկացրեց դրանց գնման համար, https://www.armtimes.com/hy/article/224595 .

բնույթի գործընթացներին, որտեղ առաջատարը Ռուսաստանի Դաշնությունն է: Ըստ ամենայնի՝ հայ-ռուսական տնտեսական, քաղաքական և ռազմաքաղաքական հարաբերությունները այսօր էլ ունեն զարգացման մեծ ներուժ, որոնք հարկ է վեր հանել, գնահատել և գործարկել:

Эрик Акопян, 30-летие установления дипломатических отношений между Арменией и Россией. достижения и видимые перспективы - В складывающейся многополярной системе международных отношений Россия играет одну из ведущих и зачастую решающих ролей. Это открывает новые перспективы для укрепления и дальнейшего развития российско-армянских отношений стратегического союзничества. Надежной основой этих отношений было и остается соглашение, подписанное между Россией и Эстонией в 1997 году. 29 августа Соглашение о дружбе, сотрудничестве и взаимной помощи.

Статья посвящена 30-летию установления дипломатических отношений между Республикой Армения и Российской Федерацией. Этот знаменательный год наши страны отмечают в условиях высокого уровня двусторонних отношений, полных решимости к дальнейшему укреплению и углублению тенденций развития.

В Армении идет острая дискуссия между сторонниками и противниками развития стратегических отношений с Россией. Эта оживленная, а порой и острая дискуссия не мешает Республике Армения принимать конструктивное и активное участие в экономических, политических и других процессах, в которых Российская Федерация является лидером. Судя по всему, армяно-российские экономические, политические и военно-политические отношения имеют еще большой потенциал для развития, который следует выделить, оценить и реализовать.

Erik Hakobyan, 30th anniversary of the establishment of diplomatic relations between Armenia and Russia. achievements and visible prospects - In the developing multipolar system of international relations, Russia plays one of the leading and often decisive roles. This opens up new prospects for the strength-

ening and further development of Russian-Armenian strategic alliance relations. The reliable basis of these relations was and continues to be the agreement signed between Russia and Estonia in 1997. August 29 Agreement on Friendship, Cooperation and Mutual Assistance.

The article is dedicated to the 30th anniversary of the establishment of diplomatic relations between the Republic of Armenia and the Russian Federation. Our countries celebrate this memorable year in conditions of a high level of bilateral relations, full of determination to further strengthen and deepen the development trends.

A sharp debate is going on in Armenia between supporters and opponents of developing strategic relations with Russia. This lively and sometimes sharp debate does not prevent the Republic of Armenia from taking a constructive and active part in the economic, political and other processes in which the Russian Federation is the leader. According to everything, the Armenian-Russian economic, political and military-political relations still have a great potential for development, which should be highlighted, evaluated and implemented.

Ուղարկվել է խմբագրություն 15.12.2022թ.
Գրախոսվել է 21.12.2022թ.
Ստորագրվել է տպագրության 25.12.2022թ.